



ները վար կը զլորէին, անշուշտ անոր համար որ իր սեպհական ազգին մատնիչ մը՝ ալ աւելի դիւրութեամբ կարող է դաւաճանել օտարի մը:

Կար սակայն միակ մարդ մը, որուն նկատմամբ Յոյները յարգանք ու պատկառանք ունեցան: Այդ մարդը Հայոց ծերունի սպարապետ Վահրամ Պահլաւունին էր, որ քանի մը անգամ Անի քաղաքին առջեւ յունական բանակները ամօթալի փախուստի ստիպած և Ախուրեան գետի ջուրերը անոնց արիւնով ներկած էր: Կայսրը զայն պահեց Հայոց Սպարապետին պաշտօնին մէջ, իբրեւ Հայագուն: Ղին հրամանատար, ենթակայ Կայսերական հրամանին:

#### ԵՐԶՆԿԱՅԻ ԱՀԱԳԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Անի քաղաքի գրաւումը նորանոր աղէտներու շարք մը բացաւ: Ահագին երկրաշարժ մը ցնցեց Եկեղեցաց գաւառը, և, ինչպէս կ'ըսէ Ուռհայեցի ժամանակակից պատմիչը. «Բազում եկեղեցիք խախտեալ փրակ ի հիմանց, և քաղաքն որ Երզնկայ կոչի փրակ առ հասարակ, և պատսոնեցաւ երկիրն և արք և կանայք ընկղմեցան ի խորս անդերոց, և գաւառս բազումս գայր ձայն աղաղակի եղաւ ի խորոց անդերոց»: Երկրաշարժը տեղի ունեցեր էր ամառ ժամանակ, որով, կ'ըսէ նոյն պատմիչը, «խաւար և մութն լինէր ի վերայ երկրի, մինչեւ արեգակն և լուսին ի կերպս արեան երեւէին, և յորժամ ելանէր ի կամարն՝ յիստակ էր<sup>3</sup>»:

Հայ պատմիչին վրայ այնչափ զօրաւոր ազդեցութիւն գործեր էր Անին յոյներու ձեռքը մատնելու գաղափարը, որ Երզնկայի այս առաջին երկրաշարժը վերագրեր էր «Աստուծոյ բարկութեանն ու խռովութեանն վասն մեղաց մեղոց», մինչ շարժին իրական պատճառն էր Հայաստանին

հրաբխային կազմութիւնը, այնպէս որ Երզնկան այդ դարէն մինչեւ մեր օրերը դեռ 21 մեծ ու սարսափելի ջարժի ենթարկուեր է, որոնց ընթացքին կոտորուեր են աւելի քան 131,000 մարդ<sup>4</sup>:

#### ՅՈՒՆԱՅ ԿՈՏՈՐԱԾԸ ԴՈՒՆԻ ԱՌՋՆԻ

Շարժի չարիքին յաջորդեց աւելի չափազուշակ աղէտ մը, որուն հետեւանքը ծանրացաւ բովանդակ հայ ժողովուրդին վրայ: Մոնոմախոս չքաւականաւոր Անի քաղաքի վրայ ձեռք զննէ, ծրագրեց գրաւել նաեւ Հայաստան աշխարհի մնացած մասերն ալ: Ուստի, նա պատուիրակներ ուղարկեց Դուինի Ապուստոս Պարսիկ Ամիրային, պահանջելով անկէ այն քաղաքները, զորոնք Ամիրան, նոյն այդ Կայսեր մեղսակցութեամբ կորզեր էր Գագիկ Բ-ի ձեռքէն, Մոնոմախոս կը պահանջէր այդ քաղաքները՝ իբրեւ մասեր Անիի թագաւորութեան և Հայաստան աշխարհի:

Ապուստոսը մերժեց ետ տալ, ցոյց տալով Կայսեր նամակը, ուր նա երդումով հաստատեր էր Ամիրային անոր տիրապետութեան իրաւունքը այդ քաղաքներուն վրայ: Կայսրը չուզեց իր երդումին տէր կանգնիլ: Առաջին անգամ չէր, որ Մոնոմախոս կը ստէր իր երդումին: Նա Հայոց Գագիկ թագաւորին ալ նամակ գրեր էր, հաստատած մեծամեծ երդումներով, միջևորդ յոռած Քրիստոսի խաչն ու Աւետարանը, բայց և այնպէս, Մոնոմախոս զրժեր էր այդ սարսափելի երդումին:

Ուխտադրուծ Կայսրը կարծելով որ պարսիկ Ամիրան ձեռքերը ծալած նստած է, հրաման տուաւ Արեւելեան նահանգներու կուսակալ Նիկողայոսի և Անիի կուսակալ Ասիտի՝ որ Յոյն, Հայ, Վրացի զօրքերով տիրեն Դուին քաղաքին: Սա-

կայն, ինչպէս կը վկայէ Յոյն պատմիչը, Կեղրոնոս, Ապուստոսը առաջուց տեղեակ յոյներու զինուորական պատրաստութեան, փութացեր էր Ազատ գետի ջուրերու ընթացքը դարձնել տալով՝ ողողել Դուին քաղաքին շուրջը գտնուող հարթավայրերը և զանոնք ճախճախուտներու վերածեր էր և ապա Պարսիկ նետածիգ զինուորները քաղաքին այգեստաններու մէջ դարանի դնելով՝ իբրեւ անհոգ մէկը կը սպասէր յոյներու գալուստին<sup>5</sup>:

Երբ միացած բանակները հասան Դուինի առջեւ, զարմացան տեսնելով գետին ջուրերը ճախճախուտներու փոխուած. անոնք անխորհրդաբար միահամուռ խառն կարգով անցան ճահիճներէն, կարծելով թէ առաջին յարձակումով կարող են քաղաքը գրաւել: Բայց երբ այգեստաններու ճախարհէն անցան, Ապուստոսը փող հնչեցուց և դարանամուտները սկսան նետեր ու քարեր տեղալ անոնց վրայ: «Եւ ի խմբել պատերազմին, կը գրէ Ուռհայեցի, բարկութիւն հասանէր յԱստուծոյ ի վերայ զօրացն Հոռոմոց, և լինէին պարտեալք յերեսաց այլազգեացն, և դարձան ի փախուստ, և եղև կոտորած մեծ ի վերայ խուստ, և բազումք ի զօրացն Հոռոմոց բրիստոնէից, և բազումք ի զօրացն Հոռոմոց անկան ի սառ ի զերուրիւն<sup>6</sup>»: Եւ որովհետեւ զժուար էր փութով ետ դառնալ ու փախչիլ այդ ճախճախուտ վայրէն, քիչեր միայն կրցան ճողովել և ապաստանիլ Անի քաղաքին մէջ: Երբ այս ճախող աղէտի լուրը հասաւ Կայսեր ականջը, նաեւ քաղաքի նոր բանակներ, որոնց հրամանատար կարգեց իր իշխաններէն մէկը, անուն Տիրախի և զրկեց Դուինի վրայ: Հասնէր ձմեռ եղանակին, ուստի ոչ միայն բան մը չկրցաւ ընել, այլ և կորսնցուց իր զինուորներու մեծ մասը: Երբ վրայ

հասաւ գարունը, ան վերստին եկաւ պաշարեց քաղաքը և մեծ տագնապ հասցուց անոր անգէն բնակիչներուն, քաղաքը չկրցաւ գրաւել, բայց անոր շրջակայ բոլոր տեղերը ապականեց: Յոյն հրամալր տեղերը իր ապիկարութեան վրէժը լուծելու համար, յարձակեցաւ Դուինէն դուրս գտնուող Պարսիկ ու Սկիւթացի զինուորներու վրայ, մեծամեծ հարուածներով տանջեց զանոնք, և անոնցմէ շատերը գերի բռնելով տարաւ Բիւզանդիոն:

#### ԱՊՈՒՍՏՈՒՄԻ ՓՈԽ-ՎՐԷՃԸ ԵՒ ՎԱՀՐԱՄԻ ՄԱՀԸ

Դառնացած այս անողորմ վարմունքէն, Ապուստոսը բորբոքեցաւ փոխ-վրէժով և յարձակեցաւ իր իշխանութեան ներքեւ գտնուող քրիստոնեաներուն վրայ, միանգամայն սպառնալով սուրէ անցնել զամայն օգնութեամբ Սելճուքեան թուրքերու սուլթանին, որ էր արիւնկազակ Տուղրիլ-բէկը, քանզի Վասպուրական աշխարհին և հիմնադիր Պարսկաստանի Սելճուքեան թագաւորութեան, ապա վրէժխնդիր Ամիրան, նոյն 1045 թուին աշնանային օրերուն, անցած իր հրոսակ խումբերու գլուխ՝ ասպատակեց Անի քաղաքին կողմերը, չարաչար տառապեցուց Հայերն ու Յոյները, գերի բռնուողները ստիպեց հաւատուրացութեան, քանդելով եկեղեցիներ:

Ահա այս ատեն է, որ Հայոց սպարապետը, Վահրամ Պահլաւունի, տեսնելով աղետալի հրդեհը, վառեցաւ իր նախկին քաջութեան կորովով, և առաջնորդ կանգնելով հայ և յոյն բանակներուն ճակագնելով հայ և յոյն բանակներուն ճակատեցաւ թշնամի բանակին դէմ, իբրեւ բրիստոնէական հաւատքի ախոյեան: Նա զարկաւ թշնամիները և զանոնք առջեւ ձգելով տարաւ մինչեւ Դուինի դռները, ուր ինկաւ իր որդին Գրիգոր Պահլաւունի: Խակ ծերունի սպարապետը՝ անխնայ

5. Յիշատակուած Հ. Միքայէլ Վ. Չամչեանէ «Պատմութիւն Հայոց», Հտ. Բ, էջ 937.  
6. Ուռհայեցի. «Պատմութիւն», էջ 115.

3. Մատթէոս Ուռհայեցի. «Պատմութիւն», էջ 114-15.

4. Աւետիք Տէր-Յակոբեան. «Աշխարհագրութիւն Հայաստանի», էջ 184.

յարձակման մը միջոցին՝ մատնուեցաւ այլազգիներու ձեռքը, որոնցմէ նահատակուեցաւ քրիստոնեայ հաւատքին համար, ութսուն տարուան հասակին մէջ: Հաւատացեալները անոր մարմինը ձեռք անցնելով՝ տարին թաղեցին Սանահնի հոգակաւոր վանքին մէջ:

Ոչ մէկ կասկած՝ որ արիասիրտ Պահլաւունին չէր կրցած հանդուրժել՝ որ իր գեղեցիկ բայց կորսուած հայրենիքը՝ օտար լուծի տակ տեսնէ: Նա այնչափ աշխատեց էր ազգային անկախութիւնը փրկելու, բայց իր բոլոր ճիգերը ապարդիւն անցեր էին, ուստի ուզեր էր ինքնակամ յօժարութեամբ իբրեւ զինուոր մը պատեւ ու հայրենիքի համար: Եւ ասոր համար է, որ Գրիգոր Մագիստրոսը հօրեղբօր վրայ գրած ողբերգական նամակին մէջ՝ խօսքը Վահրամին ուղղելով կ'ըսէ. «Արեւմտեան վիսայեայ հայրենական հասեր ընդհին, և հարազատին քո Վասակայ տեւոյցեայ միտքեան», և պէտք է, կ'ըսէ, ճանչնալ «գրոյղ աւարտումն, իբր մարտիրոսական արժանանալ պատկի»<sup>7</sup>:

Վահրամի անկումով ինկաւ Հայութեան շէնքին մեծ սիւնը, որովհետեւ նա նկատուել էր իբր Հայոց ազգին Հայր հասարակաց: Անոր նոր կենսագիրներէն մին, Կ. Կոստանեանց, արդարացի կերպով անոր գովեստը կը հիւսէ ըսելով. «Ինչպէս հինաւորաց հսկայ կազմին ինկաւ պատեւրազմի դաշտում: Անոյ դրուագաւոր գեղաքանդակ ապարաններին մեծ սիւնը խորտակուեցաւ»<sup>8</sup>: Ականատես պատմիչը, Արիստակէս Լաստիվերտցի, իրաւունք ունէր այս արժանաւոր գովեստներով կնքելու իր խօսքը. «Վահրամ այր հօգօր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս քէ ոչ որ հաւատար անա Պարսա», ասոր հա-

մար անոր վախճանը, կ'ըսէ նա, «մեծ սուգ հատոյց Հայոց»<sup>9</sup>:

#### ՓՈԽԱԴԱՐՁ ՔՍՈՒԹԻԻՆՆԵՐ

Տարի մը վերջ 1046 թուին, Ասիտի յաջորդեր էր Կամենաս, անշուշտ պալատական իշխան մը մտերիմ Մոնոմախոսի և անոր գաղտնի խորհուրդներուն տեղեակ: Նոր կուսակալը, ինչպէս կը վկայէ Լաստիվերտցի, հազիւ ոտքը Հայկական հողին վրայ դրած՝ «ոչ ըստ առաջին պատուոյն մեծարէր զհայրապետն»<sup>10</sup>: Որչափ ատեն որ Վահրամ Պահլաւունին ողջ էր, Յոյները անկէ կ'ակնածէին և, «ի պատիւ անոր երեսաց», արտաքսապէս քիչ մը գուլթ ուսէր կը ցուցնէին դէպի Հայ ժողովուրդը, իսկ անոր մահէն յետոյ, դիմակներն վար առին, և այնուհետեւ իրենց իսկական գոյնով ներկայացան, որ տողորուած էր քաղաքական ու կրօնական տեղութեամբ:

Յաւալի է որ նոր կուսակալին բռնած ընթացքին Հայերն ալ ամենայն առատութեամբ պատրուակ կը մատակարարէին, փոխադարձ քսութեամբ: Կիրակոս Վարդապետը, ուրիշ ժամանակակից պատմագիր մը, անաչառ և արդարադատ մարդ, այս տխուր գոյներով կը գծէ Անեցոց պատկերը. «Իսկ բնակիչք աշխարհին, կ'ըսէ նա, զմիմեամբք ելանելով անձոռնի յոխորտանօք, և ի միմեանս յարձակեալ խորամանկութեամբ, և ստաբանութեամբ խորհէին զխորհուրդս նենգութեամբ, մատնելով զմիմեանս Կայսեր, բաղբաղեալ զսէրն տալն առ հազարացիսն, որք և իշխանացն անգամ՝ զհայրապետսն, և նորա զնոսա»<sup>11</sup>: Այս խօսքերուն յստակ ու լուսաւոր իմաստն այս է. իշխաններն ու

Հայրապետը իրարու հետ մրցումի ելած էին՝ Կայսեր առջեւ զիրար ամբաստանելու, թէ կ'ուզեն Հայաստանի մէջ հաստատել Հազարացիներուն, այսինքն՝ Պարսկաստանի Սելճուքեան թուրքերու պետութիւնը:

Ուրեմն, դեռ երկու տարի չանցած յունական տիրապետութեան լուծը անտանելի դարձեր էր: Բայց ցաւալին այն է, որ փոխանակ միացած ուժերով այդ լուծը թօթափելու միջոցներուն վրայ խորհելու, և կամ այդ լուծը քաղցրացնելու հնարաւորութեան վրայ մտածելու, դիմած էին քսութեան այդ ստորին միջոցներուն, կասկածոտ ոսոխին աչքը բանալով:

#### ՊԵՏՐՈՍ ԱՐՄՆԻ ՄԷՋ

Ամէնէն աւելի Պետրոսին դերը աչքի զարկեր էր, որովհետեւ Հայ ժողովուրդը սկսեց էր դառնապէս լալ հայրենիքի ազատութեան կորուստը. Կաթողիկոսի այդ ստորին միջոցներու դիմելէն վերջ՝ նոր կուսակալը այլեւս պէտք չտեսաւ Պետրոսի նկատմամբ սկսուած փաղաքշական նենգաւոր դերը շարունակելու, մանաւանդ որ Յոյները Հայերու չափ «գիտէին, ինչպէս կ'ըսէ Լաստիվերտցին, որ յոյժ սիրող էր Պետրոս գաւձուց, որ և քաղաք վստակը եպրեկին զայն»<sup>12</sup>: Յունական քաղաքականութեան աչքէն վերադառնալով չէր նաեւ քաղաքականութեան աչքէն վերադառնալով չէր նաեւ Պետրոսի պարագաներու համեմատ փոխուելը: Միթէ նոյն Պետրոսը չէր որ խուլը: Միթէ նոյն Պետրոսը չէր որ Գագիկը թագաւոր օծեր էր. մինչ ձեռքի տակէն Յունական տիրապետութեան կ'ատակցէր: Անկարելի բան չէր, որ նոյն Պետրոսը մէկ երեսով Կայսեր ժպտած

ատեն, միւս երեսով ժպտէր Պարսկաստանի Սելճուքեան թուրքերու Սուլթանին, դիւրացնելով անոնց տէրութիւնը Հայոց աշխարհի վրայ, փոխարէն վարձքեր ու գանձեր ստանալով:

Անգամ մը այս կասկածներով շրջապատուած՝ Կամենասի աչքին Պետրոսին Սին մնալը քաղաքական սխալ մըն էր, ուստի. «սխալի գրով ամբաստան լինել զնմանէ առ քաղաքը»<sup>13</sup>, թէ նա է քաղաքին մէջ տիրող շփոթութեանց սկզբնապատճառը, և ստացած հրահանգին համաձայն՝ կուսակալը ստիպեց Կաթողիկոսը անկէ հլլել, յայտարարելով թէ «հրամայեալ է քեզ քաղաքը Մոնոմախոս տեղի բնակութեան ի Կարին գաւառին յԱրժն աւանի»<sup>14</sup>:

Պետրոս չկարենալով ընդդիմանալ Կայսերական հրամանին, իրեն տեղակալ կարգեց իր քեռորդին Խաչիկ Եպիսկոպոսը, և բազմախումբ հետեւորդներով, զորոնք ունէր իր թագաւորակերպ հայրապետանուցին մէջ, 1046 թուի Դեկտեմբերին հասաւ Արժն աւան զոր Լաստիվերտցին, — որուն բնիկ ծննդավայրը Լաստիվերտ՝ Արժնի մօտ էր, — «մեծանիստ և շահաւատ քաղաքս մեր» կ'անուանէ:

Պետրոսի գալուստը Արժն աւան, կ'ըսէ նոյն պատմիչը, «մեծաւ ուրախութեամբ լցոյց զանձինս տեսողացն, որ ցանկանային նմա»<sup>15</sup>, և այդ տեսողներուն մէջ էր նաեւ ինքը Լաստիվերտցի: Ուշագրաւ հանգամանքը այն է, որ իր Հայերը, սկսած Ս. Լուսաւորչէն մինչեւ մեր օրերը, այնչափ յարգանք ու մեծարանք չէին տածեր դէպի իրենց թագաւորը, որչափ դէպի իրենց Կաթողիկոսը, եթէ նոյն իսկ այդ Կաթողիկոսը Հայրենիքի դաւաճան կամ շահադէտ մէկն ըլլայ: Դա անհերքելի ապացոյց է Հայ ժողովուրդի կրօնական ու խորհրդագրած նկարագրին:

Հ. ՍՈՂԱԿ ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շարունակելի)

7. «Գրիգոր Մագիստրոսի Բզթերը», ԺԱ, էջ 40.  
8. Կ. Կոստանեանց «Գրիգոր Մագիստրոսի Բզթերը», Յաւաջարան ԻԶ.

9. Ա. Լաստիվերտցի. «Պատմութիւն», էջ 37 և 43.  
10. Լաստիվերտցի. «Պատմութիւն», էջ 43.  
11. Կիրակոս Գանձակեցի. «Համառոտ պատմութիւն», էջ 52.

12. Լաստիվերտցի. «Պատմութիւն», էջ 60.  
13. Լաստիվերտցի. «Պատմութիւն», էջ 43.  
14. Լաստիվերտցի. անդ.  
15. Լաստիվերտցի. անդ.